ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ ՌՈՄԱՆԻ

ԱՌԱՆՁԻՆ ԴԱԺԱՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՈՐԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2023

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

БАГДАСАРЯН МАРИАМ РОМАНОВНА

УГОЛОВНО-ПРАВОВАЯ ХАРАКТЕРИСТИКА И ПРОБЛЕМЫ КВАЛИФИКАЦИИ УБИЙСТВ, СОВЕРШЕННЫХ С ОСОБОЙ ЖЕСТОКОСТЬЮ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.05 - «Уголовное право и криминология, уголовно-исполнительное право»

ЕРЕВАН – 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-Ռուսական համալսարանում

Գիտական ղեկավար՝ **իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Ա. Թամազյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ. Գաբուզյան**

իրավաբանական գիտությունների թեկնածու Դ.Ա. Թումասյան

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թվականի դեկտեմբերի 9-ին՝ ժամը 11^{00}-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2023 թվականի հոկտեմբերի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավաբանական գիտությունների թեկնածու **Ջ.Հ. Հայրապետյան**

Тема диссертации утверждена в Российско-Армянском университете

Научный руководитель: **доктор юридических наук, профессор А.А. Тамазян**

Официальные оппоненты: **доктор юридических наук, профессор А.А. Габузян**

кандидат юридических наук, Д.А. Тумасян

Ведущая организация: **Институт философии, социологии и права НАН РА**

Защита состоится 9-ого дектабря 2023 года в 11^{00} часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. Овсепа Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Российско-Армянского университета.

Автореферат разослан 27-ого октября 2023 года.

Ученый секретарь специализированого совета,
кандидат юридических наук **Дж.А. Айрапетян**

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Ատենախոսության թեմայի արդիականությունը. Հանցագործությունը հանրորեն առավել վտանգավորություն ներկայացնող արարք է, որն էական, երբեմն և ծանր կամ առանձնապես ծանր վնաս է պատճառում քաղաքացիների, ինչպես նաև հասարակության ու պետության իրավունքներին ու շահերին: Այդ առումով հանցավորության դեմ պայքարը մշտապես եղել և շարունակում է մնալ ցանկացած ժողովրդավարական պետության կարևոր և առաջնահերթ խնդիրներից մեկը, որի արդյունավետ լուծումը մեծապես պայմանավորված է նաև գիտական հենքի վրա արված առաջարկությունների արդյունքում օրենսդրության կատարելագործմամբ և դրա կիրառման հետևանքով միասնական դատական պրակտիկայի ձևավորմամբ:

Այս առումով առանձնակի կարևորվում է ծանրացնող հանգամանքներում կատարվող սպանությունների, մասնավորապես՝ առանձին դաժանությամբ կատարված սպանությունների գիտական վերլուծությունը:

Դաժանությունը որպես վարքագծի տեսակ հատուկ է միայն մարդուն, և այն նույնքան հին է, որքան մարդկությունը: Պետության պատմության վաղ շրջաններում և դրան հաջորդող դարերի ընթացքում դաժանությունը հանդիսացել է ինչպես հանցավոր վարքագծի դրսևորման անձնական հատկանիշ, այնպես էլ պետության և պետական իշխանության ձեռքին միջոց՝ ցանկացած անհնազանդության ճնշման և բնակչությանն ահաբեկման մեջ պահելու համար: Ավելին, վերջինի դեպքում պետության պատմական զարգացման տևական ժամանակաընթացքում դաժանությունն իր դրսևորումներով գրեթե բարձրացվել և հասցվել է օրենքի աստիճանի, որպիսին իր արտացոլումն է գտել և դրսևորվել ինչպես կատարված հանցագործությունների համար նախատեսվող պատժամիջոցների տեսակներում, այնպես էլ կատարված հանցավոր արարքների մեջ անձի մեղավորության ապացուցման գործընթացում՝ հանդիսանալով դատավարության առանձին տարր: Առանձնակի դաժանություն պարունակող պատժատեսակներից էին կաշին քերելը, կաշին քերթելը, անձի կոկորդը հալած պղինձ, արծաթ, երկաթ, արճիճ կամ երբեմն նաև ոսկի լցնելը, մարմինը երկու կես անելը, խաչելությունը, քառատումը, ողնաշարը կոտրելը, ողջակիզելը, կենդանի թաղելը, ցցի վրա հանելը և այլն: Անձից խոստովանական ցուցմունքներ կորզելու նպատակով նրանց նկատմամբ կիրառվող աննկարագրելի դաժանության կտտանքներից էին՝ մետաղական տարբեր գործիքներով նրանց մարմինը ճզմելը, կոտրելը, ձգելը, խեղելը, պատռելը, ծակելը, այրելը և այլն:

Եվ եթե հետագա պատմական ժամանակաընթացքում պետությունները և պետական իշխանությունը հրաժարվեցին պատժամիջոցների առանձին դաժան եղանակների կիրառումից, այնուհետև բազմաթիվ պետություններ նաև մահապատժի կիրառումից ընդհանրապես, ապա նույնը չի կարելի ասել այդ առումով անձի հանցավոր վարքագծի առանձին դաժան դրսևորումների մասին:

Ընդհանրապես անձին դիտավորությամբ կյանքից զրկելու ցանկացած դեպք իր մեջ կրում է դաժանության հատկանիշ, սակայն ցավ և տառապանք պատճառող

ցանկացած սպանություն չէ, որ համարվում է առանձին դաժանությամբ կատարված: Օրենքը չի սահմանում առանձին դաժանության հասկացությունը: Որևէ սահմանագիծ չկա դաժանության և առանձին դաժանության միջև, պարզ չէ, թե որտեղ է ավարտվում դաժանությունը, և որտեղ է սկսվում առանձին դաժանությունը. այն գնահատողական կատեգորիա է և բովանդակային ճշգրտում է ստանում միայն իրավակիրառի կողմից՝ գործի կոնկրետ հանգամանքներից ելնելով: Այս ամենը հանգեցրել է նրան, որ այս հանցագործության որակման ժամանակ ծագել և դեռևս ծագում են լուրջ բարդություններ և խնդիրներ՝ կապված ոչ միայն առանձին դաժանության հասկացության սահմանման բացակայության, այն գնահատողական կատեգորիա լինելու հետ, այլև հանցագործության օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների սահմանման և նրանց քրեաիրավական բնութագրի հետ կապված վիճահարույց բնույթ կրող լուծումների հետ, կամ ընդհանրապես այդպիսիք դեռևս լուծված չլինելու հետ, որով էլ պայմանավորված է ընտրված թեմայի արդիականությունը: Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ 01.07. 2022 թվականին ուժի մեջ մտած ՀՀ նոր քրեական օրենսգրքում որոշակի փոփոխությունների են ենթարկվել հանցագործության, մեղքի, հանցագործությունների որակման և այլ կարևոր ինստիտուտներն ու քրեաիրավական նորմերը, որոնք վկայում են նշված հիմնախնդրի համապարփակ և համալիր հետազոտման անհրաժեշտության մասին, որպիսին հայրենական քրեական իրավունքում մինչ օրս բացակայում է:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը

Անձի դրսևորած դաժանության խնդիրների հետազոտումը գիտության կողմից համալիր բնույթ է կրել՝ իր մեջ ընդգրկելով ոչ միայն իրավունքի, այլև հոգեբանության, հոգեբուժության, սոցիոլոգիայի և գիտության այլ ոլորտներ:

Անձի կողմից դրսևորած դաժանության խնդիրների ուսումնասիրությունը մշտապես գտնվել է ՌԴ և ՀՀ իրավաբան գիտնականների ուշադրության կենտրոնում: Խնդրին անդրադարձել են հայտնի իրավագետներ՝ Լ.Ա. Անդրեևան, Մ.Կ. Անիյանցը, Յու.Մ. Անտոնյանը, Օ.Վ. Արտյուշինան, Մ.Ի. Բաժանովը, Ս.Ս. Բեզրուկովը, Վ.Գ. Բելյաևը, Ս.Վ. Բորոդինը, Յու.Մ. Բրայնինը, Լ.Դ. Գաուխմանը, Մ.Վ. Գրիգորյանը, Ն.Ի. Զագորոդնիկովը, Բ.Վ. Զդրավոմիսլովը, Ա.Ա. Թամազյանը, Պ.Յու. Կոնստանտինովը, Ա.Գ. Մենշիկովան, Դ.Տ. Շայկենովան, Մ.Դ. Շարգորոդսկին, Գ.Ի. Չեչելը, Ա.Ա. Պիոնտկովսկին, Ս.Կ. Պիտերցևը, Ն.Պ. Պոպովան, Տ.Ա. Պլակսինան, Ս.Վ. Ռոստորոպովը, Ն.Մ. Սվիդլովը, Վ.Վ. Ստաշիսը, Ն.Ս. Տագանցևը, Վ.Վ. Տկաչենկոն, Ժ.Վ. Տրուշինան, Ե.Ա. Ֆրոլովը և ուրիշներ:

Ագրեսիայի, բռնության և դաժանության հոգեբանական մեխանիզմների վերլուծությունը եղել է հայտնի հոգեբաններ Զիգմունդ Ֆրոյդի, Էռնեստ Ջոնսի, Կառլ Գուստաֆ Յունգի, Ալֆրեդ Ադլերի, Հանս Սաքսի, Օտտո Ռանկի, Շանդրո Ֆերենցիի և այլոց ուսումնասիրության առարկան:

Առանձին դաժանությամբ կատարված սպանության քրեաիրավական վերլուծությունը հիմնականում վերաբերում է երևույթի իրավական ոլորտին, և վերոհիշյալ ու այլ գիտնականների արժեքավոր հետազոտություններն անշուշտ կարևոր նշանակություն ունեն քրեական իրավունքի գիտության զարգացման

ոլորտում, մասնավորապես՝ առանձին դաժանության հասկացության, նրա դրսևորումների, օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների բացահայտման և գնահատման հարցում: Սակայն դրա հետ մեկտեղ բազմաթիվ խնդիրներ դեռևս մնում են չլուծված կամ չհետազոտված, որոնք լրջագույն բարդություններ են առաջացնում հանցավոր արարքների ճիշտ որակման հարցում: Իրավակիրառների շրջանակներում կատարված հարցումները ցույց են տվել, որ նրանց բացարձակ մեծամասնությունը խնդիրներ ունի՝ կապված գնահատողական կատեգորիաներ պարունակող նորմերի կիրառման հետ, դրանց ոչ բավարար որոշակիության, բարդ և միաժամանակ ոչ համալիր հետազոտված լինելու պատճառով: Այս ամենը վկայում է նշված հիմնախնդրի համապարփակ և համալիր հետազոտման անհրաժեշտությունը, որպիսին հայրենական քրեական իրավունքում մինչ օրս բացակայում է:

Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտն է առանձին դաժանությամբ կատարված սպանությունների համար քրեական պատասխանատվության սահմանման ու դրա կիրառման ընթացքում ծագող հասարակական հարաբերությունները, արդարության սկզբունքի իրագործման համատեքստում անձի կյանքի դեմ ուղղված հանցագործությունների և քրեական օրենսգրքով նկարագրված հանցագործության հատկանիշների նույնության հավաստումն ու ամրագրումը՝ որպես օրինականության ամրապնդման, արդարադատության ճիշտ իրականացման կարևորագույն պայման:

Հետազոտության առարկան է քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերը, որոնք կարգավորում են անձի կյանքի դեմ ուղղված հանցագործությունների, մասնավորապես՝ առանձին դաժանությամբ կատարված սպանությունների կապակցությամբ ծագող հասարակական հարաբերությունները, այդ հարաբերությունների հիմնախնդիրները կանոնակարգող Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և այլ երկրների քրեական օրենսդրության նորմերը, քրեական օրենսգրքերի իրավակարգավորումները, դատական բարձրագույն ատյանների որոշումները և դատական պրակտիկան:

Հետազոտության նպատակն ու խնդիրները

Հետազոտության նպատակն է առանձին դաժանությամբ կատարված սպանությունների բազմակողմանի և համալիր վերլուծությունը, օրենսդրության մեջ առկա խնդիրների վերհանումը, օրեսնդրական ամրագրումների համապատասխանեցումն առանձին դաժանությամբ կատարված սպանությունների սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններին և այս կապակցությամբ քրեական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկների մշակումը:

Վերոհիշյալ նպատակների իրականացման համար փորձ է արվել լուծել հետևյալ տեսական և գործնական խնդիրները.

1. վերհանել և վերլուծել առանձին դաժանության՝ որպես գնահատողական կատեգորիայի, հասկացության առանձնահատկություններին առնչվող հիմնահարցերը:
2. բացահայտել և վերլուծել առանձին դաժանությամբ կատարված

սպանությունների վերաբերյալ գիտության մեջ առկա հիմնական տեսակետների և մոտեցումների ինչպես ընդհանրությունները, այնպես էլ իրարամերժումները կամ անհամապատասխանությունը, այդ թվում՝ հայրենական և օտարերկրյա օրենսդրությունների համեմատական վերլուծության հիման վրա:

3. ընդհանրացնել առանձին դաժանությամբ կատարված սպանությունների գործերով քննչական և դատական պրակտիկայի նյութերը, դրանցում առկա հիմնահարցերը և լուծման հիմնական եղանակները:

4. ներկայացնել առանձին դաժանությամբ կատարված սպանությունների որակման առանձնահատկությունները:

5. մշակել և ներկայացնել կոնկրետ առաջարկություններ՝ ուղղված քննարկվող թեմայի վերաբերյալ քրեական օրենսդրության կատարելագործմանը:

Հետազոտության տեսական հիմքը

Հետազոտության տեսական հիմքն են կազմել հայրենական և արտասահմանյան աղբյուրները, բազմաթիվ իրավաբան գիտնականների, ինչպես նաև հոգեբանների, հոգեբույժների, սոցիոլոգների աշխատությունները, մեկնաբանությունները և եզրահանգումները:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը

Հետազոտության իրավական և փորձառական հիմք են կազմել ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ քրեական օրենսգիրքը, ՌԴ և այլ երկրների քրեական օրենսգրքերը և օրենսդրությունները, առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանի որոշումները, ՌԴ գերագույն դատարանի որոշումները, Բալթյան և այլ երկրների իրավապահ մարմինների և դատարանների դիրքորոշումները, «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիան, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները, որոնք ամբողջության մեջ ապահովել են ատենախոսական աշխատանքում կայացրած եզրահանգումների հավաստիությունն ու հիմնավորվածությունը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը

Հետազոտության մեթոդաբանական հիմքն են կազմել համընդհանուր դիալեկտիկական, պատմական, համեմատական, վիճակագրական ու վերլուծական մեթոդները, օրենքներն ու կատեգորիաները, ինչպես նաև հետազոտության սոցիոլոգիական, ձևական իրավաբանական, իրավահամեմատական հատուկ մեթոդները:

Հետազոտության գիտական նորույթը

Ներկայացված ատենախոսությունը հայրենական իրավագիտության մեջ առաջին ամբողջական և համալիր գիտական հետազոտությունն է, որում Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և այլ պետությունների քրեական օրենսդրությունների, դատական բարձրագույն ատյանների որոշումների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների, ՄԱԿ-ի համապատասխան կոնվենցիաների, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին այլ վերաբերելի միջազգային փաստաթղթերի, տեսական բազմաթիվ աղբյուրների համակարգային ուսումնասիրության վրա, համալիր և

համակարգված մեթոդաբանությամբ ներկայացվել են առանձին դաժանությամբ կատարված սպանությունների որակման տեսական և գործնական հիմնահարցերը, բացահայտվել են, սահմանվել և ներկայացվել են առանձին դաժանությամբ կատարված սպանությունների որակման կանոնները, իրավակիրառ և դատական պրակտիկայի հիման վրա ընդհանրացվել են առկա հիմնահարցերը, և դրանց համարժեք լուծման համար արվել գիտական նորույթ պարունակող կոնկրետ առաջարկություններ և եզրահանգումներ, արվել քրեական օրենսդրության կատարելագործմանն ուղղված մի շարք առաջարկություններ: Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվում է նաև պաշտպանության ներկայացվող դրույթներում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. Գնահատողական հասկացությունները իրենց հստակության, պարզության, հասանելիության պակաս չափաքանակի պատճառով չեն համապատասխանում օրենքի որոշակիության պահանջներին և հանդիսանալով սուբյեկտիվ կատեգորիաներ՝ հանգեցնում են միևնույն կամ նույնանման իրավիճակներում կատարված արարքների տարբեր, երբեմն իրարամերժ քրեաիրավական գնահատման: Հետևաբար, օրինականության անշեղ պահպանման համար անհրաժեշտ է հանցակազմի հատկանիշների սահմանումը պայմանավորել ոչ թե օրենքի շրջանակից դուրս (extra legem) իրավակիրառի գիտակցությամբ, այլ առանց բացառության այն ամրագրել քրեական օրենքում (intra legem):

Հետևաբար, ինչպես յուրաքանչյուր հանցակազմի հատկանիշները, այնպես էլ առանձին դաժանությամբ կատարված սպանության հանցակազմի հիմնական հատկանիշները պետք է ամրագրված լինեն օրենքում, իսկ կոնկրետ դեպքում՝ քրեաիրավական նորմի դիսպոզիցիայում:

Այս առումով առաջարկվում է.

ա. քրեաիրավական նորմի դիսպոզիցիայում հանցագործության անվանման սահմանումից բացի, ներառել առանձին դաժանությունը վկայող փաստական հանգամանքները՝ հանցագործության հիմնական և բնութագրիչ հատկանիշները՝ հասցնելով այն նկարագրական դիսպոզիցիայի բնութագրին:

բ. ՀՀ քրեական օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները (հոդված 3) լրացնել առանձին դաժանության հասկացությունը բացահայտող նորմով:

Հետևաբար, անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել դաժանության և առանձին դաժանության հիմնական հատկանիշները և այդ առումով ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ ձևակերպմամբ ենթակետով.

2. Դաժանությունը դիտավորությամբ անձին կամ նրա մերձավորին ֆիզիկական և (կամ) հոգեկան տառապանք պատճառելն է, իսկ առանձին դաժանությունը դաժանության այն չափաքանակն է, որը գտնվում է քրեական օրենսգրքով սահմանված կոնկրետ հանցագործության հիմնական հանցակազմով պայմանավորված դաժանության հասկացության շրջանակից դուրս և հանդես է գալիս որպես դաժանության առանձին, հավելյալ, լրացուցիչ, ինքնուրույն դրսևորում, որը տուժողի կամ նրա մերձավորի նկատմամբ դրսևորված հակաիրավական

գործողության կամ անգործության արդյունքում առաջ է բերում հանցավորի գիտակցությամբ ընդգրկված հանցագործության հիմնական հանցակազմով նախատեսված հետևանքի առաջացման համար ոչ պարտադիր, դրա շրջանակից դուրս, ուժեղ, ծանր, ֆիզիկական և (կամ) հոգեկան տառապանք:

Նման սահմանման լույսի ներքո արվել են մի շարք հետևություններ, որոնք կարող են կարևոր դեր ունենալ հանցավոր արարքի որակման հարցում, մասնավորապես.

- Որքան մեծանում է դաժանության չափաքանակը, այնքան ավելի մեծ հանրային վնաս է հասցվում քրեական օրենքով պաշտպանվող իրավունքներին ու շահերին, և անձն ու արարքը իրենցից առավել մեծ վտանգավորություն են ներկայացնում:
- Այն դեպքում, երբ հանցավորը իրական հնարավորություն է ունեցել տուժողին կյանքից զրկել ավելի պակաս վտանգավոր եղանակով կամ միջոցներով, սակայն գիտակցաբար այն թույլ է տվել առանձնակի տանջանք և տառապանք պատճառող առավել վտանգավոր եղանակով կամ միջոցներով, կարող է վկայել հանցավորի դրսևորած առանձին դաժանության մասին:
- Այն բոլոր դեպքերում, երբ թե՛ սպանության ավելի պակաս վտանգավոր եղանակը կամ միջոցները և թե՛ սպանության առավել վտանգավոր եղանակն ու միջոցները իրենցում պարունակել են հանցավորի գիտակցությամբ ընդգրկված տուժողին առանձին տանջանքներ և տառապանք պատճառելու օբյեկտիվ հատկանիշներ, ապա արարքը ենթակա է որակման որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն:

3. Նկատի ունենալով, որ տանջանքը, ծաղրուծանակը, մարդկային արժանապատվության ստորացումը, անարգանքը, սադիզմը կամ մոտալուտ մահվան գիտակցմամբ պայմանավորված այլ նվաստացումները, ինչպես նաև անձին տառապանք պատճառելու հետ կապված նմանատիպ այլ դրսևորումները նույնպես պարունակում են դաժանության հատկանիշներ, ուստի սպանության այն դեպքերում, երբ անձին կյանքից զրկելուց առաջ կամ կյանքից զրկելու ընթացքում, նրա նկատմամբ դրսևորված թվարկված և այլ համասեռ արարքների արդյունքում անձին կամ նրա մերձավորին, կամ անձին և նրա մերձավորին գիտակցաբար պատճառվել է ֆիզիկական ուժեղ ցավ և (կամ) հոգեկան ուժեղ տառապանք, հանցավորի արարքը ենթակա է որակման որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն՝ անկախ նրանից, թե կյանքից զրկելու եղանակը կապված է առանձին դաժանության դրսևորման հետ, թե՝ ոչ:

- Վերոգրյալ դրույթի լույսի ներքո դժվար չէ նկատել, որ գործնականում, բազմաթիվ դեպքերով հանցավորի արարքը որակվել և որակվում է որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն, երբ առանձին դաժանությունը դրսևորվել է ոչ թե բուն արարքում, այլ արարքից դուրս գտնվող՝ ուղեկցող կամ զուգորդող հանգամանքներում, այն դեպքում, երբ առանձին դաժանությամբ կատարված սպանության օրենսդրական ձևակերպումը ենթադրում է, որ առանձին դաժանությունը պետք է դրսևորվի հենց բուն արարքում՝ անձին կյանքից զրկելու

համար կիրառված բռնության մեջ և արտահայտվի տուժողին առանձին տանջանք կամ տառապանք պատճառելով:

Նման պայմաններում, ակնհայտ է, որ առանձին դաժանության օրենսդրական ձևակերպումը խոչընդոտում է առանձին դաժանության էության և բովանդակության ամբողջովին լեգիտիմ բացահայտմանը և սահմանափակում առանձին դաժանության հասկացության բովանդակային կիրառման շրջանակները՝ չընդգրկելով այն բոլոր դրսևորումները, որոնք ինչպես հանրության, այնպես էլ իրավապահ մարմինների կողմից օբյեկտիվորեն գնահատվել են որպես առանձին դաժանություն:

- Նույնը վերաբերում է նաև առանձին տառապանքները բացառապես տուժողին պատճառելուն վերագրվող սահմանափակումներին:

Հետևաբար, արձանագրված բացթողումներն ու թերությունները վերացնելու, առանձին դաժանության դրսևորման դեպքում հանցակազմի կիրառման օրենսդրական սահմանափակումները հաղթահարելու, առանձին դաժանությամբ կատարված սպանության օբյեկտիվ գնահատական և պատկեր ունենալու նպատակով առաջարկվում է.

4. ՀՀ քրեական օրենսգրքում առանձին դաժանությամբ սպանությունը սահմանել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ, այն է՝ **«առանձին դաժանությամբ կատարված կամ առանձին դաժանությամբ զուգորդված (ուղեկցվող) սպանությունը»:**

Որևէ տարակուսանք չառաջանալու համար նկատենք, որ այս դեպքում օգտագործվող զուգորդում կամ ուղեկցող եզրույթները որևէ աղերս չունեն նախկին քրեական օրենսգրքում (հոդված 104-րդ) օրենսդրորեն ամրագրված հանցագործությունների համակցության բաղադրիչ հանդիսացող այլ հանցագործությունների զուգորդմամբ կատարված լինելու և դրանց որակման կանոնների հետ և չեն կարող նույն արարքի համար կրկնակի դատապարտման հիմք հանդիսանալ:

- Նույն հիմնավորմամբ կչեզոքացվի և կհաղթահարվի նաև առանձին տառապանքները բացառապես տուժողին պատճառելուն վերագրվող սահմանափակումը:

- Վերոգրյալ դրույթի լույսի ներքո մերձավորի ներկայությամբ կատարված սպանությունը ենթակա է որակման, որպես առանձին դաժանությամբ կատարված, ինչպես այն դեպքում, երբ տուժողին դրանով պատճառվել է առանձին տառապանք, այնպես էլ այն դեպքում, երբ այդ տառապանքը պատճառվել է ոչ թե տուժողին, այլ նրա մերձավորին, կամ երբ այդ տառապանքը միաժամանակ պատճառվել է թե՛ տուժողին և թե՛ մերձավորին: Հետևաբար, արարքից դուրս գտնվող այլ ուղեկցող հանգամանքները ոչ թե չեն կարող, այլ հակառակը, կարող են բացահայտել հանցավոր արարքի էությունը և տվյալ դեպքում վկայել հանցավորի կողմից դրսևորած առանձին դաժանությունը:

5. Մեր կարծիքով ընդունելի չէ այն տեսակետը, համաձայն որի առանձին դաժանությամբ կատարված սպանություն պետք է համարել նաև ազգակցական հարաբերությունների մեջ գտնվող անձի սպանությունը և ընդհանրապես՝

ազգականի կողմից կատարված սպանությունը ծանրացնող հանգամանքներում կատարված սպանությունների թվին դասելը:

Հասկանալի է, որ մերձավորի նկատմամբ հանցանք կատարածը ի վիճակի է այլ անձանց նկատմամբ առավել ծանր հանցանք կատարել, սակայն հենց միայն այդ հանգամանքը համարել սպանությունը ծանրացնող հանգամանք, ընդունելի չէ, և կարծում ենք, որ կարիք չկա այս հարցում կրկին վերադառնալ միջնադար կամ ավելի հեռավոր անցյալ: Տվյալ դեպքում, սպանության դաժանությունը գնահատելիս նախապատվությունը տալ սպանության կատարման եղանակի կամ առանձին դաժանությունը վկայող այլ հանգամանքների փոխարեն սպանություն կատարողի անձը բնութագրող հանգամանքներին, ընդունելի չէ: Մոռացության է տրվել թեկուզև այն հանգամանքը, որ նման սպանությունների բացարձակ մեծամասնությունը կատարվում են կենցաղային հողի վրա ծագած վեճ ու կռվի ժամանակ, և հաճախ կռվի մեջ մեղավորը հանդիսանում է տուժողը, կամ այս բնույթի գործերով հաճախ անձը գտնվում է տուժողի անօրինական գործողություններով պայմանավորված հուզական, սակայն ոչ աֆեկտի վիճակում, կամ սպանությունը կատարվում է անուղղակի դիտավորությամբ: Եվ նման պայմաններում անձին մեղադրել մի հանցագործության մեջ, որը պատժվում է ազատազրկմամբ 14-20 տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկմամբ, ընդունելի չէ:

6. Հետևաբար նույն հիմնավորմամբ ընդունելի չէ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված այն «նորույթը», համաձայն որի՝ մերձավոր ազգականի կողմից կատարված սպանությունը դասվել է ծանրացնող հանգամանքներում կատարված սպանությունների թվին (հոդված 155-րդ, մաս 2-րդ, կետ 9-րդ): Գտնում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքում տեղ գտած այլ անճշտությունների հետ միասին պետք է վերացվի նաև ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը: Իսկ մերձավոր ազգականի կողմից կատարված սպանությունները պետք է որակել մի դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով (որպես հասարակ սպանություն), մյուս դեպքում՝ 155-րդ հոդվածի 2-րդ մասով (որպես նույն հոդվածի այլ ծանրացնող հանգամանքներում կատարված սպանություն), երրորդ դեպքում՝ 156-րդ (հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանություն) կամ 159-րդ (անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ սպանություն) հոդվածով՝ պայմանավորված մեղմացնող, այլ ծանրացնող կամ դրանք բացառող հանգամանքներով. մի բան, որը բնորոշ է բոլոր տեսակի սպանությունների քրեաիրավական բնութագրին և որակմանը:

7. Ինչպես բոլոր բացատրական բառարաններում խոշտանգումն ընկալվել և ընկալվում է շատ ավելի լայն և խոր իմաստով, քան հատուկ սուբյեկտի կողմից այն թույլ տալու կոնվենցիոն և ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածում ամրագրված սահմանափակ դեպքերը: Այսինքն՝ **օրենսդիրը, քրեական օրենսգրքում նույնությամբ ընդունելով խոշտանգման հասկացության կոնվենցիոն ամրագրումները, դրանով իսկ արհեստականորեն և չհիմնավորված կերպով երկփեղկել, աղճատել և նեղացրել է խոշտանգման հասկացության բառարանային և հանրային ընկալման բովանդակությունը: Այդ իսկ առումով գտնում ենք, որ խոշտանգում հասկացության մեջ առաջնայինը ոչ թե**

հանցագործության սուբյեկտը կամ հատուկ սուբյեկտն է կամ նպատակը, այլ արարքը, նրա բնույթը, հանգամանքները, կատարման եղանակը, որը հաճախ հատուկ պատրաստված կամ ընտրված միջոցներով և գործիքներով տուժողին գիտակցաբար անասելի տանջանք կամ հոգեկան տառապանք է պատճառում: Հետևաբար գտնում ենք, որ ցանկացած անձի կողմից կոնկրետ եղանակով և կոնկրետ իրավիճակում տարբեր առարկաների և գործոնների ներգործությամբ տուժողին դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ և (կամ) հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը օբյեկտիվ կողմից իր մեջ կրում է խոշտանգման հատկանիշ, անկախ հոդվածի վերտառությունից, այն քրեական օրենսգրքի այս կամ այն գլխում կամ հոդվածում ամրագրված լինելուց և կոնկրետ դեպքում իր մեջ կրում է առանձին դաժանության դրսևորում, և որի պայմաններում կատարված սպանությունը ենթակա է որակման՝ որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն:

8. Մինչև 1975 թվականը դիակի անդամահատման և ոչնչացման բոլոր դեպքերը համարվել են առանձին դաժանություն, և սպանությունից հետո նման արարքը որակվել է որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն: Հետագայում ՀՀ և ՌԴ դատական բարձրագույն ատյանների որոշումների արդյունքում արվեցին որոշակի սահմանափակումներ, իսկ այնուհետև դիակի անդամահատումն ընդհանրապես դադարեց համարվել որպես առանձին դաժանությամբ կատարված սպանության հատկանիշ՝ հիմքում ունենալով մեր կարծիքով խիստ պարզունակ մի ձևակերպում, համաձայն որի՝ «ինչպես էլ դրսևորվի անարգանքը, դիակը չի կարող ոչ մի տառապանք զգալ»:

Դատական բարձրագույն ատյանի նման որոշումը տարաբնույթ կերպ է ընդունվել իրավաբան գիտնականների և պրակտիկ աշխատողների կողմից: Նրանց կարծիքով այն դեպքում, երբ դիակի անդամահատմամբ կամ ծաղրուծանակի ենթարկելով (ականջները, քիթը, մարմնի մասերը կտրելը, աչքերը հանելը և այլն) հանցավորը հետապնդել է կամ գիտակցաբար թույլ է տվել տուժողի մերձավորների նկատմամբ լրացուցիչ, հավելյալ տառապանք, նույնպես կարող է համարվել առանձին դաժանության դրսևորում, առավել ևս, երբ դրանք հաճախ դրսևորվում են նախապես ծագած դիտավորությամբ և առանց հանցագործությունը թաքցնելու նպատակի: Ինչ վերաբերում է 2003 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի 265-րդ հոդվածում ամրագրված դիակի անարգելու հանցակազմին և դրանում սահմանված տուգանք կամ առավելագույնը երկու ամիս ժամկետով կալանք պատժատեսակին, ապա, կարծում ենք, վերջինս եթե ոչ զավեշտալի, ապա խիստ անհամաչափ է նախատեսված հանցավոր արարքի բնույթին ու վտանգավորությանը: Նույնը վերաբերում է նաև 2021 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածով տրված կարգավորումներին, որքանով որ մահացածի մարմինն անարգանքի ենթարկելը ոչ այլ ինչ է, քան բացառիկ անպատկառություն և անբարոյականություն, որը վկայում է հանցավորի առանձին անգթության, անմարդկայնության և դաժանության մասին:

Այս համատեքստում, նկատի ունենալով այն հանգամանքը, որ ինչպես 2003 թվականի, այնպես էլ 2021 թվականի ՀՀ քրեական օրենսգրքերով **դիակն**

անարգանքի ենթարկելը դիտարկվել է որպես հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություն և դիակն անարգանքի ենթարկելու զուտ փաստը չի համարվել որպես առանձին դաժանության հատկանիշ, որով, ինչպես օրենսդրի, այնպես էլ դատական պրակտիկայի կողմից «արգելափակվել է այն որպես առանձին դաժանություն դիտարկելը», հիմք ընդունելով գործող օրենսդրական կարգավորումները և դրանց շրջանակներում հնարավոր լուծումների սահմանները, գտնում ենք, որ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված դիակն անարգանքի ենթարկելու ցանկից պետք է առանձնացնել «դիակը պղծելը» և այն սահմանել որպես առանձին հանցակազմ՝ «մահացածի մարմինը պղծելը» վերտառությամբ՝ այն ընդգրկելով ծանր հանցագործությունների խմբում: Նույն հիմնավորումներով ՀՀ քրեական օրենսգրքի «դիակն անարգանքի ենթարկելը» վերտառությամբ 305-րդ հոդվածը փոփոխել «մահացածի ապօրինի արտաշիրիմելը, նրա հագուստը կամ նրա վրա գտնվող այլ իրերը վերցնելը կամ մահացածի հիշատակն այլ կերպ անարգելը» ձևակերպմամբ, նույնը և հոդվածի դիսպոզիցիայում: Գտնում ենք, որ առաջարկված փոփոխությունը ավելին է, քան բառերի զուտ բարեհունչ դարձնելը:

9. Որպես առանձին դաժանություն ցուցաբերելը վկայող հանգամանքներ կարող են հանդիսանալ անձին կյանքից զրկելու հետ կապված այնպիսի գործողությունները, որոնք ինքնին սպանության կատարման եղանակ չեն հանդիսանում: Դրանց թվում են՝ մերձավորի ներկայությամբ կատարված սպանությունը, անձի սպանությունը հաջորդ զոհի ներկայությամբ, հանցավորի կողմից տուժողի կյանքի նկատմամբ գործադրած բռնության արդյունքում վերջինիս այլ անձանց կողմից օգնություն ցույց տալուն խոչընդոտելը, սպանությունից առաջ տուժողին տանջանքների, խոշտանգման, անարգանքի, ծաղրուծանակի ենթարկելը և այլ համասեռ արարքները:

10. Տուժողի մերձավորին առանձին տառապանք պատճառելու հանցավորի դիտավորությունը բավարար է արարքը առանձին դաժանությամբ կատարված սպանություն որակելու համար: Այստեղ որևէ սահմանափակում նախատեսելը և տուժողին օգնելու հնարավորությունից զրկված լինելը և այդ հանգամանքը հանցավորի կողմից գիտակցված լինելու մասին լրացուցիչ չափորոշիչներ սահմանելն ընդունելի չէ: **Գտնում ենք, որ տուժողին օգնություն ցույց տալու հնարավորությունից մերձավորի զրկված լինելը կամ չլինելը, որպես այդպիսին, դուրս է տառապանքի բնութագրից, բնույթից, աստիճանից, դրսևորումից, հետևաբար և չի կարող դեր խաղալ արարքի որակման հարցում, որքանով որ տուժողին օգնություն ցույց տալու հնարավորությունից մերձավորի զրկված լինելը կամ չլինելը քննարկվող հանցագործության հատկանիշներ չեն: Այսինքն՝ տուժողի մերձավորի առանձնակի տառապանքը պայմանավորված է բացառապես մերձավորի մահվան, հարազատ մարդու անդառնալի կորստի փաստի ականատեսը լինելու, այդ ամենը գիտակցելու և անասելի տառապանքներ կրելու հետ:**

Վերոհիշյալ սահմանման լույսի ներքո արվել են մի շարք հետևություններ, որոնք կարող են կարևոր դեր ունենալ հանցավոր արարքի ճիշտ որակման հարցում, մասնավորապես՝

- **Մերձավորի ներկայությամբ կատարված սպանությունը ենթակա է որակման, որպես առանձին դաժանությամբ կատարված, ինչպես այն դեպքում, երբ տուժողին դրանով պատճառվել է առանձին տառապանք, այնպես էլ այն դեպքում, երբ այդ տառապանքը պատճառվել է ոչ թե տուժողին, այլ նրա մերձավորին, կամ երբ այդ տառապանքը միաժամանակ պատճառվել է թե՛ տուժողին և թե՛ մերձավորին:**
- **Մերձավորի ներկայությամբ կատարված սպանությունը վկայում է հանցավորի առավել բարձր վտանգավորության մասին, հատկապես նաև այն դեպքերում, երբ հանցավորը դրանով իսկ հետապնդում է տուժողի մերձավորներին առանձնակի տառապանքներ պատճառելու հատուկ նպատակ: Եվ այն տեսակետը, որ նման դեպքում, չնայած հանցավորի կողմից տուժողի մերձավորների նկատմամբ դրսևորած դաժանությանը, սպանությունն ինքնին առանձին դաժան չի դառնում, ընդունելի չէ, որքանով որ առանձին դաժանությունը կապվում է ինչպես անձին կյանքից զրկելու եղանակի, այնպես էլ առանձին դաժանությունը վկայող այլ հանգամանքների հետ: Հետևաբար արարքից դուրս գտնվող այլ ուղեկցող հանգամանքները ոչ թե չեն կարող, այլ հակառակը, կարող են բացահայտել հանցավոր արարքի էությունը, և տվյալ դեպքում վկայել հանցավորի կողմից դրսևորած առանձին դաժանության մասին:**

11. Գործող օրենսդրության համաձայն տուժողի հակաբարոյական գործողությունների արդյունքում ծագած աֆեկտի վիճակում կատարված սպանությունները, մասնավորապես՝ ամուսնական անհավատարմության, մերձավորի դավաճանության և այլ դեպքերում, այսուհետև չեն հանդիսանում որպես մեղմացնող հանգամանքներում կատարված սպանություններ, այլ ենթակա են որակման որպես հասարակ կամ ծանրացնող հանգամանքներում կատարված սպանություններ: Մեր կարծիքով կատարված փոփոխությունը ընդունելի չէ, որքանով որ, սպանությունների ցանկացած տեսակի դեպքում էլ անկախ արարքի որակման կանոններից գործ ունենք անդառնալի կորստի (անձի մահվան) փաստի հետ և բնականաբար, նման դեպքերում խոսք չի կարող լինել «ընտանիքում բռնության կանխարգելման, բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին»: Նկատենք նաև, որ հասարակական գիտակցության մեջ ընդունելի չէ ամուսնական անհավատարմությունը կամ մերձավորի դավաճանությունը անձնական ազատությունների շարքը դասելը կամ այն սեռական ազատության հետ նույնացնելը: Հետևաբար **կարծում ենք, որ որպես հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանություն, պետք է որակել ոչ միայն տուժողի հակաիրավական, այլև հակաբարոյական արարքի կամ վարքագծի հետևանքով հանկարծակի առաջացած հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանությունները (այդ թվում և հոգեկան խիստ հուզմունքի վիճակում առանձին դաժանությամբ կատարված սպանությունները): Այդ առումով գտնում ենք, որ**

անհրաժեշտ է համապատասխան լրացում կատարել ՀՀ քրեական օրենսգրքի 156-րդ հոդվածի դիսպոզիցիայում՝ «հակահիրավական» բառից հետո ավելացնելով «հակաբարոյական» բառը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը

Հետազոտության տեսական նշանակությունն այն է, որ հայրենական քրեական իրավունքում առաջին անգամ կատարվել է առանձին դաժանությամբ կատարված սպանությունների որակման հիմնախնդիրների համալիր վերլուծություն և ուսումնասիրությունների արդյունքում գիտականորեն հիմնավորված առաջարկություններն ու եզրակացությունները կարող են նպաստել հայրենական քրեական իրավունքի գիտության՝ որպես իրավունքի ճյուղի զարգացմանը, քրեական օրենսդրության կատարելագործմանը, ինչպես նաև միասնական իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը:

Հետազոտության արդյունքները կարող են մեթոդաբանական հիմք հանդիսանալ գիտության տվյալ ոլորտում անցկացվող ուսուցման և գիտական ուսումնասիրությունների համար, ինչպես նաև գործնականում կիրառվել դատական ու իրավապահ մարմինների կողմից:

Հետազոտության արդյունքների փորձարկումը

Ատենախոսության արդյունքները քննարկվել են Հայ-Ռուսական համալսարանի՝ քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնում, որտեղ հաստատվել են ատենախոսության մեջ առկա հիմնական տեսական վերլուծություններն ու եզրակացությունները, և աշխատանքը երաշխավորվել է հրապարակային պաշտպանության: Ատենախոսության մեջ կատարված վերլուծությունների արդյունքները արտացոլվել են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում, մասնավորապես՝ «Օրինականություն», «Դատական իշխանություն», «Տարածաշրջան և աշխարհ» («Регион и Мир») գիտագործնական, գիտավերլուծական, գիտամեթոդական ամսագրերում:

Ատենախոսության կառուցվածքը. Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք ներառում են տասնչորս պարագրաֆներ, եզրակացությունից, օգտագործված գրականության, իրավական ակտերի և պրատիկայի նյութերի ցանկից:

Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից ներկայացվող պահանջներին:

Ատենախոսության համառոտ բովանդակությունը

Ներածությունում տրվում է հետազոտության թեմայի արդիականության հիմնավորումը, նրա մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակն ու խնդիրները, հետազոտության տեսական, իրավական, փորձառական և մեթոդաբանական հիմքը, հետազոտության գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը:

Առաջին գլուխը՝ «Առանձին դաժանությամբ կատարված սպանությունների պատմահիրավական ասպեկտները» վերտառությամբ բաղկացած է չորս պարագրաֆներից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «Պետության կողմից դաժանության դրսևորումը որպես անհնազանդության ճնշման և բնակչության ահաբեկման միջոց» վերտառությամբ, հեղինակը պատմական աղբյուրների վրա վերլուծության է ենթարկել պետության կողմից առանձին դաժանության դրսևորումներին, նախաքրիստոնեական ժամանակներից սկսած՝ որպես անհնազանդության ճնշման և բնակչության ահաբեկման միջոցի:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Առանձին դաժանությամբ կատարված սպանությունների օրենսդրական ամրագրումները պատմական զարգացման ընթացքում» վերտառությամբ, հեղինակը հիմնվելով տեսական աղբյուրների վրա վերլուծության է ենթարկել անձի հանցավոր վարքագծի առանձին դաժան դրսևորումների օրենսդրական արմրագրումները, սկսած հռոմեական իրավունքում դրանց ամրագրումներից մինչև մեր օրերը:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ «Առանձին դաժանությունը որպես գնահատողական կատեգորիա» վերտառությամբ, հեղինակը վերլուծել է ընդհանրապես քրեական իրավունքում գոյություն ունեցող գնահատողական կատեգորիաները և մասնավորապես առանձին դաժանությունը որպես քրեական իրավունքի բարդ և միաժամանակ ոչ համալիր հետազոտված ոլորտի, նկատելով, որ գնահատողական հասկացությունների հնարավորինս շատ օրենսդրական ամրագրումները, նրանց հասկացության և բաղադրիչների օրենսդրական ամրագրումը միայն կնպաստի արդարադատության ճիշտ իրականացմանը և իրավակիրառը «կազատվի» զուտ սեփական հայեցողությամբ իրավական նորմի իմաստն ու բովանդակությունը գնահատելուց և մեկնաբանելուց:

Առաջին գլխի չորրորդ պարագրաֆում՝ «Առանձին դաժանության հասկացությունը քրեական իրավունքում» վերտառությամբ, հեղինակը հիմնվելով տեսական աղբյուրների, ՀՀ, ՌԴ և այլ երկրների դատական պրակտիկայի, ՄԻԵԴ-ի որոշումների, ՄԱԿ-ի Կոնվենցիաների հենքի վրա վերլուծության է ենթարկել «դաժանություն» և «առանձին դաժանություն» եզրույթները, բացահայտել նրանց բարոյաիրավական հիմքը, բացահայտել և սահմանել նրանց հասկացությունը, էությունն ու բովանդակությունը:

Երկրորդ գլուխը՝ «Առանձին դաժանությամբ կատարված սպանությունների օբյեկտիվ հատկանիշները» վերտառությամբ, բաղկացած է հինգ պարագրաֆից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Առանձին դաժանությամբ կատարված սպանությունների օբյեկտիվ կողմի հասկացությունը, հատկանիշները և քրեահիրավական բնութագիրը» վերտառությամբ, հեղինակը մանրամասն վերլուծության է ենթարկել սպանության օբյեկտիվ կողմի՝ հանցավոր արարքի արտաքին դրսևորումների դերն ու նշանակությունը արարքի որակման հարցում:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Սպանության կատարման եղանակը որպես առանձին դաժանությամբ կատարված սպանության օբյեկտիվ հատկանիշ» վերտառությամբ, հեղինակի կողմից մանրամասն անդրադարձ է

կատարվել հանցագործության կատարման եղանակի դերին և կարևորությանը, նկատելով որ հանցագործության կատարման եղանակը օբյեկտիվ կողմից արարքի արտաքին դրսևորման այն ձևերն ու մեթոդներն են, որոնք հանցավորն օգտագործում է հանցավոր հետևանքի առաջացման համար, և որը հաճախ վկայում է հանցագործության կատարման առանձին դաժանության մասին: Այսինքն՝ կատարման եղանակն առանձին դաժանությամբ կատարված սպանության օբյեկտիվ կողմի հատկանիշներից մեկն է, այդ բնույթի հանցագործություններով՝ ամենահիմնականը:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Խոշտանգումը որպես առանձին դաժանությամբ կատարված սպանության օբյեկտիվ կողմի հատկանիշ» վերտառությամբ, հեղինակը ՄԱԿ-ի համապատասխան կոնվենցիայի, ՄԻԵԴ-ի և ՀՀ վճռաբեկ դատարանի համապատասխան որոշումների, քրեական օրենսդրության լույսի ներքո, մանրակրկիտ վերլուծության է ենթարկել «խոշտանգում» եզրույթը, որպես բռնության տեսակի կամ վատ վերաբերմունքի ծայրահեղ դրսևորման, հանգելով հետևության առ այն, որ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը կոնկրետ եղանակով և կոնկրետ իրավիճակում օբյեկտիվ կողմից իր մեջ կրում է խոշտանգման հատկանիշ անկախ քրեական օրենսգրքի այս կամ այն գլխում կամ հոդվածում ամրագրված լինելուց և իր մեջ կրում է առանձին դաժանության դրսևորում և որի պայմաններում կատարված սպանությունը ենթակա է որակման որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն:

Երկրորդ գլխի չորրորդ պարագրաֆում՝ «Մեծաթիվ վնասվածքներ հասցնելը որպես առանձին դաժանությամբ կատարված սպանության եղանակ» վերտառությամբ, հեղինակը մանրամասն վերլուծության է ենթարկել տուժողին պատճառված վնասվածքների բազմակիության և առանձին դաժանության հասկացությունների ոչ նույնական լինելը, ինքնին բազմաթիվ մարմնական վնասվածքների առկայության փաստը առանձին դաժանության ապացուցող միակ պայմանը չլինելը, այլ վերջինս բազմաթիվ այլ հանգամանքներով պայմանավորված լինելու հնարավորությունը և այդպիսիք որպես օբյեկտիվ կողմի հատկանիշ ճանաչելը միայն առանձին դաժանությունը հանցավորի գիտակցությամբ ընդգրկված լինելու փաստով:

Երկրորդ գլխի հինգերորդ պարագրաֆում՝ «Առանձին դաժանության դրսևորումը վկայող այլ հանգամանքները որպես սպանության օբյեկտիվ կողմի հատկանիշ» վերտառությամբ հեղինակը հանգամանորեն վերլուծության է ենթարկել առանձին դաժանությամբ կատարված սպանության օբյեկտիվ կողմի երկրորդ կարևոր հատկանիշը՝ առանձին դաժանության դրսևորումը վկայող այլ հանգամանքները, որոնք ինքնին սպանության կատարման եղանակ չեն հանդիսանում և միաժամանակ այն համադրել առանձին դաժանությամբ կատարված սպանության օբյեկտիվ կողմի հիմնական հատկանիշ համարվող կատարման եղանակի հետ: Վերլուծվել է հանցագործության կատարման այնպիսի իրավիճակները, ինչպիսիք են՝ մերձավորի ներկայությամբ կատարված սպանությունը, հաջորդ զոհի ներկայությամբ կատարված սպանությունը և այլն, որոնք անկախ կատարման եղանակից հանդիսանում են առանձին դաժանությամբ

կատարված սպանության օբյեկտիվ կողմի հատկանիշներ: Հեղինակը անդրադարձել է նաև իրավաբանական գրականության մեջ տեղ գտած տեսական դիրքորոշումների վերլուծությանը, մասնավորապես՝ տուժողին մերձավորի կողմից օգնություն ցույց տալու հնարավորությունից զրկված լինելու, մերձավորի կրած տառապանքները տուժողին սպանելու արարքից դուրս գտնվելու և դրանք միայն սպանությանը ուղեկցող հանգամանքներ հանդիսանալու վերաբերյալ:

Երրորդ գլուխը՝ «Առանձին դաժանությամբ կատարված սպանությունների սուբյեկտիվ հատկանիշները» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Առանձին դաժանությամբ կատարված սպանությունների սուբյեկտիվ կողմի հասկացությունը, հատկանիշները և քրեաիրավական բնութագիրը» վերտառությամբ, հեղինակը մանրամասն վերլուծության է ենթարկել սպանության սուբյեկտիվ կողմի՝ հանցավոր արարքի ներքին բովանդակությունը, դերն ու նշանակությունը արարքի որակման հարցում, առանձին դաժանությունը հանցավորի դիտավորությամբ ընդգրկված լինելու հանգամանքին, տուժողին և (կամ) մերձավորին առանձին տառապանք պատճառելու հանցավորի դիտավորությանը, հանցանք կատարած անձի գիտակցական և կամային դրսևորումներին:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Մեղքը և նրա դրսևորումը առանձին դաժանությամբ կատարված սպանության դեպքում» վերտառությամբ, հեղինակը վերլուծության է ենթարկել հանցագործության պարտադիր հատկանիշ հանդիսացող մեղքի ինստիտուտը, արարքի հակահիրավականությունը գիտակցելու կամ դա գիտակցելու կարողությունը, դիտավորության տեսակները, նրանց գիտակցական և կամային տարրերը, հիմքում ունենալով անձի կամաարտահայտմամբ պայմանավորված վերաբերմունքը իր կատարած հակահիրավական արարքի և դրա արդյունքում վրա հասած հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ:

Երրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Շարժառիթը և նպատակը որպես առանձին դաժանությամբ կատարված սպանության սուբյեկտիվ կողմի հատկանիշ» վերտառությամբ, հեղինակը հանցագործության սուբյեկտիվ կողմի բովանդակությունը կազմող հատկանիշների շրջանակում վերլուծության ենթարկելով առանձին դաժանությամբ կատարված սպանության շարժառիթը և նպատակը նկատել է, որ վերջիններս ամրագրված չեն քրեական օրենքում որպես առանձին դաժանությամբ կատարված սպանության հանցակազմի կառուցվածքային հատկանիշներ, հետևաբար և ցանկացած շարժառիթ և նպատակ կարող են հանդիսանալ որպես առանձին դաժանությամբ կատարված սպանության շարժառիթ կամ նպատակ, միաժամանակ և որևէ շարժառիթ կամ նպատակ չեն կարող բացառել սպանությունը առանձին դաժանությամբ կատարելը:

Երրորդ գլխի չորրորդ պարագրաֆում՝ «Փաստական սխալը առանձին դաժանությամբ կատարված սպանության դեպքում» վերտառությամբ, հեղինակը գործող օրենսդրական կարգավորումների շրջանակներում վերլուծության է ենթարկել առանձին դաժանության հետ կապված արարքի փաստական

հանգամանքների վերաբերյալ անձի սխալ պատկերացումների դեպքում արարքի որակման առանձնահատկությունները:

Երրորդ գլխի հինգերորդ պարագրաֆում՝ «Առանձին դաժանությամբ կատարված սպանության և հարակից հանցագործությունների հարաբերակցությունը» վերտառությամբ, հեղինակը վերլուծության է ենթարկել առանձին դաժանությամբ կատարված սպանության և անօգնական վիճակում գտնվող տուժողի սպանության, առանձին դաժանությամբ կատարված սպանության և հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանության, առանձին դաժանությամբ կատարված սպանության և անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ կատարված սպանության հարաբերակցությունները, նրանց տարբերություններն ու առանձնահատկությունները:

Ատենախոսության եզրակացության մեջ կատարվել են ներքոհիշյալ եզրահանգումներն ու առաջարկությունները:

1. Օրենսդրի կողմից օգտագործվող հասկացությունները, որոնց բովանդակությունը քրեական օրենքում բացահայտված չէ, այլ այն, գործի փաստական հանգամանքներից ելնելով, բացահայտվում է իրավակիրառի կողմից, ընդունված է անվանել գնահատողական կատեգորիաներ:

2. Գնահատողական կատեգորիաները իրենց հստակության, պարզության, հասանելիության պակաս չափաքանակի պատճառով չեն համապատասխանում օրենքի որոշակիության պահանջներին և հանդիսանալով սուբյեկտիվ կատեգորիաներ՝ հանգեցնում են նրան, որ այն, ինչը պարզ և հասկանալի է մեկի համար, դառնում է, կամ կարող է դառնալ բարդ և անհասկանալի մեկ ուրիշի համար:

3. Որքանով որ արարքի որակման հիմնարար ակտը հանդիսանում է օրենքը, իսկ հանցակազմի բոլոր հատկանիշները պետք է ամրագրված լինեն քրեական օրենքում, հետևաբար, խնդրի լուծման հիմնական տարբերակը քրեաիրավական նորմի դիսպոզիցիայում, հանցագործության անվանումից բացի, կոնկրետ հանցագործության հիմնական և բնութագրիչ հատկանիշների սահմանելն է:

4. Առանձին դաժանությունը վկայող փաստական հանգամանքների տակ պետք է հասկանալ հանցավոր արարքի կատարման առանձին դաժան եղանակի և (կամ) այն վկայող հանգամանքների առկայությունը, հանցավորի կողմից տուժողին կյանքից զրկելու եղանակի և (կամ) այն վկայող հանգամանքների առանձին դաժան բնույթը գիտակցելը, հանրության համար դրա վտանգավոր հետևանքները կամ այդ հետևանքների առաջացման հնարավորությունը կամ անխուսափելիությունը նախատեսելը, ինչպես նաև տուժողի մահը հենց այդ եղանակով ցանկանալը կամ գիտակցաբար թույլ տալը:

5. Առանձին դաժանության բացահայտումը առաջին հերթին նրա բաղադրիչների՝ «դաժանության» և նրա դրսևորման «առանձին» բնույթի, դրանք բնութագրող հատկանիշների բացահայտումն է:

6. Առանձին դաժանությունը որպես հանցագործության հատկանիշ սահմանող հանցակազմում առկա է երկու կամ կրկնակի գնահատողական հասկացություն՝ «դաժանությունը» իր տարաբնույթ դրսևորմամբ և «տառապանքը»՝ որպես դաժանության դրսևորման արդյունք:

7. Առանձին դաժանությամբ կատարված սպանությունը բնութագրող հանգամանքներն են՝ սպանության կատարման եղանակը, սպանության հետ կապված հանցավորի առանձին դաժանությունը վկայող այլ հանգամանքները և առանձին դաժանությունը հանցավորի դիտավորությամբ ընդգրկված լինելը:

8. Արարքի որակման հարցում տարբերակում չի դրվում օբյեկտիվ կողմից առանձին դաժանությունը բնութագրող երկու հավասարարժեք հանգամանքների՝ հանցագործության կատարման առանձին դաժան եղանակի և առանձին դաժանությունը վկայող այլ հանգամանքների միջև:

9. Որոշ դեպքերում առանձին դաժանությամբ կատարված սպանությունը օբյեկտիվ կողմից իր մեջ կրում է գործողության և անգործության համատեղ դրսևորում, երբ գործողությունը ստեղծում է հանցավոր հետևանքի առաջացման իրական վտանգ, իսկ տևական ժամանակով անգործությունը հանգեցնում է հանցավոր հետևանքի առաջացման՝ տուժողի մահվան:

10. Եթե առանձին դաժան եղանակով պայմանավորված սպանության կատարման ժամանակ հանցավորը ոչ միայն գործում է առանձին դաժան եղանակով, այլև գիտակցում է իր կողմից տուժողին կյանքից զրկելու եղանակի առանձին դաժան բնույթը, ինչպես նաև ցանկանում կամ գիտակցաբար թույլ է տալիս տուժողի մահը հենց այդ եղանակով, ապա հանցավորի առանձին դաժանությունը վկայող այլ հանգամանքների դեպքում՝ հանցավորը հիմնականում չի գործում առանձին դաժան եղանակով, սակայն գիտակցում է իր կողմից տուժողին կյանքից զրկելու իրավիճակի ամբողջական հանգամանքների առանձին դաժան բնույթը, ինչպես նաև ցանկանում կամ գիտակցաբար թույլ է տալիս տուժողի մահը հենց այդ կերպ:

11. Սպանությունը պետք է համարել առանձին դաժանությամբ կատարված ոչ միայն տուժողին տառապանք պատճառելու, այլև այդպիսին նրա մերձավորին պատճառելու դեպքում: Բազմաթիվ դեպքերում (մերձավորի ներկայությամբ կատարված սպանության, հաջորդ զոհի ներկայությամբ կատարված սպանության դեպքերում) առանձին դաժանությունը դրսևորվում է ոչ թե բուն արարքում, այլ արարքից դուրս գտնվող ուղեկցող կամ զուգորդող հանգամանքներում:

12. Սպանության դեպքում առանձին դաժանությունը գնահատելիս նախապատվությունը պետք է տրվի սպանության կատարման եղանակին, ոչ թե սպանություն կատարող անձի բնութագրող հանգամանքներին:

13. Այսինքն՝ առանձին դաժանությունը առաջին հերթին սպանության կատարման եղանակ է:

14. Այն դեպքերում, երբ տանջանք, խոշտանգում, ծաղրուծանակ համարվող գործողությունները կիրառվել են անձին կյանքից զրկելու ընթացքում, ապա այդպիսիք կարող են դիտվել նաև որպես սպանության կատարման եղանակ:

15. Տուժողին պատճառված վնասվածքների բազմակիությունը նույնական չէ առանձին դաժանության հետ: Վնասվածքների քանակը կարող է առանձին դաժանության հատկանիշ հանդիսանալ միայն այն դեպքում, երբ հանցավորի դիտավորությունն ուղղված է եղել տուժողին կամ նրա մերձավորին առանձին տառապանք պատճառելուն:

16. Սպանության կատարման իրավիճակը այդ պայմանների և հանգամանքների ամբողջությունն է, որում կատարվում է հանցագործության օբյեկտիվ կողմը: Սպանության իրավիճակը կարող է վկայել տուժողին կամ նրա մերձավորներին առանձին հոգեկան տառապանք պատճառելու մասին, իսկ սպանության բնույթին վերաբերող այլ հանգամանքները կարող են վկայել հանցավորի դրսևորած առանձին դաժանության մասին:

17. Դաժանությունը իր մեջ կրում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեկան տառապանքի բաղադրիչ: Հետևաբար, կյանքից զրկելուց առաջ կամ կյանքից զրկելու ընթացքում տուժողին անարգելը, ստորացնելը կամ մոտալուտ մահվան գիտակցմամբ պայմանավորված այլ նվաստացումները և դրանց արդյունքում նրան ուժեղ հոգեկան տառապանք պատճառելը նույնպես առանձին դաժանության դրսևորումներ են՝ անկախ նրանից, թե կյանքից զրկելու եղանակը կապված է առանձին դաժանության դրսևորման հետ, թե՝ ոչ:

18. Բոլոր այն դեպքերում, երբ սպանության կատարման իրավիճակը պայմանավորված է փակ տարածքից, բարձրությունից, հիվանդություններից կամ հարուցիչներից, տուժողի ունեցած ֆոբիաներն ու վախերն օգտագործելով, վերջինիս լրացուցիչ, հոգեկան տառապանք պատճառելով, առկա է առանձին դաժանությամբ կատարված սպանության հանցակազմ:

19. Տուժողին օգնություն ցույց տալու հնարավորությունից մերձավորի զրկված լինելը կամ չլինելը քննարկվող հանցագործության հատկանիշներ չեն:

20. Անկախ տարիքային շեմից՝ արարքի ողբերգականությունը գիտակցող երեխայի ներկայությամբ ծնողի սպանությունը դանակի մեկ հարվածով, մեկ կրակոցով կամ այլ ցանկացած եղանակով ենթակա է որակման՝ որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն:

21. Այն դեպքերում, երբ հանցավորը սխալմամբ որպես տուժողի մերձավոր է ընդունել այլ կողմնակի անձի և տուժողին սպանելով՝ տուժողի մերձավորին առանձին տառապանք պատճառելու նպատակ է ունեցել, ապա «կարծեցյալ մերձավորի» նման դեպքում տուժողի սպանությունը նույնպես ենթակա է որակման՝ որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն:

22. Շարժառիթը չի բացառում սպանությունը առանձին դաժանությամբ կատարելը:Ցանկացած շարժառիթ, այդ թվում նաև վրեժը, խանդը, նախանձը, ատելությունը, վախը և այլն կարող են հանդիսանալ առանձին դաժանությամբ կատարված սպանության շարժառիթ:

23. Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման հատկանիշների առկայությունը բացառում է արարքը առանձին դաժանությամբ կատարված սպանություն որակելը:

24. Հարձակումը կանխելուց հետո հաշվեհարդարի բնույթ կրող սպանությունը չի կարող որակվել որպես անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ կատարված սպանություն: Հարձակումը կանխելուց հետո, հաշվեհարդարից ելնելով, անձին առանձին դաժանությամբ սպանելը ենթակա է որակման որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Պետության կողմից դաժանության դրսևորումը որպես անհնազանդության ճնշման և բնակչության ահաբեկման միջոց, «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, թիվ 119, Երևան, 2020, էջ 3-10:
2. Առանձին դաժանությամբ կատարված սպանությունների օրենսդրական ամրագրումները պատմական զարգացման ընթացքում, «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, թիվ 120, Երևան, 2020, էջ 3-12:
3. Առանձին դաժանությունը որպես գնահատողական կատեգորիա, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, թիվ 1-2 (259-260), Երևան, 2021, էջ 101-115:
4. Առանձին դաժանության հասկացությունը քրեական իրավունքում, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, թիվ 3-4 (261-262), Երևան, 2021, էջ 127-140:
5. Առանձին դաժանությամբ կատարված սպանության օբյեկտիվ կողմի հասկացությունը, հատկանիշները և քրեաիրավական բնութագիրը, «Տարածաշրջան և աշխարհ» («Регион и мир») գիտավերլուծական հանդես, թիվ 3, Երևան 2021, էջ 59-69:
6. Սպանության կատարման եղանակը որպես առանձին դաժանությամբ կատարված սպանության օբյեկտիվ հատկանիշ, «Տարածաշրջան և աշխարհ» («Регион и мир») գիտավերլուծական հանդես, թիվ 4, Երևան, 2021, էջ 67-73:
7. Խոշտանգումը որպես առանձին դաժանությամբ կատարված սպանության օբյեկտիվ կողմի հատկանիշ, «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, թիվ 129, Երևան, 2022, էջ 3-13:
8. Առանձին դաժանության դրսևորումը վկայող այլ հանգամանքները որպես սպանության օբյեկտիվ կողմի հատկանիշ, «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, թիվ 130, Երևան, 2022, էջ 28-39:
9. Մեղքը և նրա դրսևորումն առանձին դաժանությամբ կատարված սպանության դեպքում, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, թիվ 4-6 (274-276), Երևան, 2022, էջ 84-94:

БАГДАСАРЯН МАРИАМ РОМАНОВНА

УГОЛОВНО-ПРАВОВАЯ ХАРАКТЕРИСТИКА И ПРОБЛЕМЫ КВАЛИФИКАЦИИ УБИЙСТВ, СОВЕРШЕННЫХ С ОСОБОЙ ЖЕСТОКОСТЬЮ

РЕЗЮМЕ

Актуальность темы исследования заключается в том, что закон не определяет понятия жестокости и особой жестокости, не ставит какой-либо границы между жестокостью и особой жестокостью, не устанавливает, где заканчивается жестокость и начинается особая жестокость, в результате жестокость и особая жестокость считаются оценочной категорией, их содержательная корректировка оставлена на усмотрение правоприменителя, что без дифференциации указанных признаков и законодательного закрепления привело к тому, что в вопросе применения рассматриваемого состава преступления и уголовно-правовой квалификации деяния возникли и возникают многочисленные сложности и проблемы, связанные с различными толкованиями и взаимоисключающими решениями.

Следовательно, целью исследования является выявление проблем и упущений, являющихся предметом рассмотрения, в результате комплексного анализа законодательства и судебной практики убийств, совершенных с особой жестокостью, на основе научных обоснований разработать и представить предложения, направленные на совершенствование уголовного законодательства и правоприменительной практики, детальное законодательное регулирование сферы и его закрепления.

Для достижения вышеуказанных целей была предпринята попытка решить ряд теоретических и практических задач, в частности, выявить и проанализировать понятие особой жестокости как оценочной категории и ее особенности, выявить и проанализировать как общности, так и противоречия основных точек зрения науки об убийствах, совершенных с особой жестокостью, а также существующие в судебной практике проблемы, основные пути решения и т. д.

Правовую и эмпирическую базу исследования составили Конституция РА, Уголовный кодекс РА, уголовные кодексы и законодательства РФ и других стран, постановления судов первой инстанции, апелляционного и кассационного судов,

постановления пленума Верховного Суда РФ, позиции правоохранительных органов и судов Балтийских и других стран, Всеобщая декларация прав человека, Европейская конвенция защите прав человека и основных свобод, Конвенция против пыток и других жестоких, бесчеловечных или унижающих достоинство видов обращения и наказания, правовые позиции Европейского суда по правам человека, которые в целом обеспечили достоверность и обоснованность выводов, сделанных в диссертационной работе.

Научная новизна исследования: Представленная диссертация является первым полным и комплексным научным исследованием в отечественной юриспруденции, в котором на основании системного изучения уголовных законодательств Республики Армения, Российской Федерации и других государств, постановлений высших судебных инстанций, правовых позиций Европейского суда по правам человекам соответствующих конвенций ООН, других относимых международных документов о правах и основных свободах человека, многочисленных теоретических источников по комплексной и систематизированной методологии были представлены теоретические и практические вопросы квалификации убийств, совершенных с особой жестокостью, были выявлены, установлены и представлены правила квалификации убийств, совершенных с особой жестокостью, на основе правоприменительной и судебной практики были обобщены имеющиеся проблемы, и для их равноценного решения были сделаны конкретные предложения и заключения, содержащие научную новизну, сделан ряд предложений, направленных на совершенствование уголовного законодательства. Научная новизна диссертации проявляется также в представленных на защиту положениях.

Тема диссертации была рассмотрена на кафедре уголовного права и уголовно-процессуального права Российско-Армянского университета, где были утверждены основные теоретические положения и выводы диссертации. Результаты проведенных исследований отражены в научных статьях автора, опубликованных в рецензируемых научных журналах.

Теоретическая и практическая значимость исследования состоит в том, что результаты исследования, ряд теоретических и законодательных предложений могут быть использованы в дальнейших научных исследованиях, в правотворческой и правоприменительной практике, а также в учебном процессе.

MARIAM ROMAN BAGHDASARYAN

MAIN ISSUES OF THE CRIMINAL AND LEGAL CHARACTERIZATION AND QUALIFICATION OF MURDERS COMMITTED WITH A PARTICULAR CRUELTY

SUMMARY

The modernity of the topic of the study is the fact that the law does not establish the concepts of the cruelty and the particular cruelty and does not differentiate the cruelty and the particular cruelty in any way, nor does it clarify where the cruelty ends and the particular cruelty begins; thus the cruelty and the particular cruelty are considered as an evaluative category, and their substantive clarification is left to the discretion of the law enforcer, and this, without distinguishing these characteristics and without legal provisions, leads to the fact that in the issue of application of the discussed corpus delicti and the criminal-legal qualification there have been and still are many difficulties and problems related to these heterogeneous interpretations and contradictory solutions.

Therefore, the aim of the study is to review the problems and omissions that are the subject of the issue through a comprehensive analysis of the legislation and judicial practice on murders committed with a particular cruelty, and on the basis of the scientific substantiation to develop and present proposals aimed at improving the criminal law and improving the law enforcement practice, detailed legislative regulation of the field and its legal provisions.

In order to implement the above objectives, an attempt has been made to solve a number of theoretical and practical issues, in particular, to identify and analyze the concept of the particular cruelty as an evaluative category and its peculiarities, to discover and analyze both commonalities and contradictions in the main points of view existing in the science regarding the murders committed with a particular cruelty, as well as the main issues available in the judicial practice, the main methods of solution, etc.

The legal and experimental basis of the study are the Constitution of the Republic of Armenia, the Criminal Code of the Republic of Armenia, criminal codes and the legislation of the Russian Federation and other countries, decisions of courts of first instance, courts of appeal and cassation, decisions of the plenum of the Supreme Court of the Russian Federation, positions of law enforcement agencies and courts of the Baltic States and other countries, the Universal Declaration of Human Rights, the European Convention on Human Rights and Fundamental Freedoms, the Convention against Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, legal positions of the European Court of Human Rights that together ensure the reliability and validity of the conclusions drawn in the dissertation work.

Scientific novelty of the study: The submitted dissertation is the first complete and comprehensive scientific study in the national jurisprudence, which presents in a

comprehensive and systematized methodology the main issues of theoretical and practical qualification of murders committed with a particular cruelty, based on a systematic study of criminal codes, decisions of the highest courts of the Republic of Armenia, the Russian Federation and other countries, legal positions of the European Court of Human Rights, relevant UN conventions, and other applicable international instruments on human rights and fundamental freedoms and numerous theoretical sources; the rules of classification of murders committed with a particular cruelty are identified, specified and presented; the main existing issues are summarized on the basis of the law enforcement and judicial practice, and specific proposals and conclusions containing scientific novelty are made to address them equivalently; also a number of proposals have been made to improve the criminal law. The scientific novelty of the dissertation is also manifested in the provisions submitted for defense.

The topic of the dissertation is discussed at the Department of Criminal Law and Criminal Procedure Law of the Armenian-Russian University, and the main theoretical provisions and conclusions of the dissertation have been approved. The results of the study are reflected in the author's scientific articles published in the reviewed scientific periodicals.

The theoretical and practical relevance of the dissertation is that the results of the study and a number of theoretical and practical proposals can be used in the further scientific studies, in the legislative and law enforcement practice, as well as in the educational process.